


THE
DICKRIS PUBLISHING CO.
NEW YORK CITY.



ՏԵԳՐԻՍԻ ՍԻՆԱԿՆԵՐԸ ԲԱՑ
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՆԻ

ԱՉՔԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 72

ՆԻՒ ԵՈՐԻ, ՀԱՐԱՍՏ, ՄԱՐՏ 25 1899

ԳԻՆ 3 ՍԵՆՐ

ԱՉՔԱՅԻՆ

Սուլթանը որ կարծես ի ծննդե-
նէ երգում է խոսքով հայերը մին-
չև իրենց գերեզմաններուն մէջ, ա-
նոնց սակորներն ալ հանգիստ չ'ը-
ղերով. այժմ ալ երբ Օրթոդոքսի
գերեզմանոցը կուգէ՝ հոն զօրանոց
չ'իջնու համար. կարծես ըսելու հա-
մար թէ՛ «իմ սպանդանոցներս եւ
զաւհանոցներս ձեր գերեզմաններուն
վրայ պիտի կանգնեմ...». Եւ մեր
հոգեւորականներն որ գէթ մեր մեռ-
եալներու կմախքներուն վրայ մտա-
նաւոր հոգ ու նախանձամբնոցը թիւն
կը ցուցնէին. Լրագիրներ կըսեն թէ
Օրթոդոքսի Պատրիարքը, շնոգրեւ
ի՛նչ շահագրգռութիւններէ մղուած՝
կրակն ինկեր է օր առաջ Սուլթանի
փախաբն իրազորակա՛ն գերեզմանո-
ցը անոր յանձնելով. Երանի թէ կա-
րող լինէինք ըսելու թէ այս՝ նոր քա-
ղաքականութեան մ'որդի գրութիւնն
է, զոր Բիստուս առաջագրեց. «Թ'ոչ
տուր մեռելներուն որ իրենց մեռել-
ներն թաղեն...»:

—Կը լսենք թէ Գէհրանի բողո-
քականներն մայրներն սքանչելի գիր-
կը գարծիր են:

—Շարժումն է կառնեք հետեւալ
ազգային կարեւոր լուրերը:

Սմբերկայի միութեանը ՏԵԹ. Ռեյ-
տայտ վաճառէ գրած վերջին նամա-
կին մէջ Ս. Պատրիարքին ուղղեալ,
անուշայն ազգաստեղծեան սաստի-
կութիւնը կը յայտնէ, և նիւթական նու-
էրի հետ մէկտեղ կարող հովիւի մը
պէտքը:

—Պարբերէն լատին միութեանը
մը Բէն Ռաֆայէլ՝ նամակ գրելով
Պատրիարքարան դիտարկութիւն ըրեր
է բողոքական ՏԵԹ. Պրօքսին՝ Հայ
եկեղեցւոյն մէջ քարոզ խօսելուն
դէմ: Կերակայ թէ յարգելի Բէնի ջի-
ղերուն դպրէն է սօքթ. Պրօքսի ցը-
ցուցած անկեղծ համակրութիւնը
դէպի Հայ եկեղեցին:

—Կ. Պրօքսին կը հեռագրեն եւրո-
պական Լրագիրներին թէ՛ կաթոլիկ
միութեաններն, որոնք վստի նահան-
գին մէջ Հայերին նպաստ կը քաշին
այնչափ շատ հայեր գաւառապետ ը-
րած են որ Բ. Դուռը միջամտելու
մտադիր է:

—Պառն Ժողովն իր վերջին նիս-
տին մէջ վերջնականապէս մերժե-
ր է իգմիրեանի առաջնորդական ընտրու-
թիւնն, և հրահանգ զրկեր է Եգիպ-
տոս նոր ընտրութեանց ձեռնարկելու:

—Մեքիսիկոյի Եպիսկոպոս Մու-
րատեան Չմիւնիստի առաջնորդ կար-
գուած է:

—«Իրաւունք» ի Գահիրէի թղթա-
կիցն կը գրէ թէ՛ Նուպար Փաշայի
կառկին արամազորութիւններն անը-
ւոյն Գերմանական հիւպատոսարանն
կը գնուի, և մօտ օրերս պիտի բաց-
ուի:

Կըսուի թէ այդ կառկին գու-
մարն երեք միլիոն տուրք է: Նու-
պար Փաշայի ձեռն Հարստութիւնն
100,000,000 Փրանքի կը հասնի:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Փիլիպեան կղզիները Սմբերկա-
ցիներու և տեղացի ապստամբնու-
միջև շարունակ տաք ճակատամար-
տան անդի կուսնան: Եկած լուրե-
րուն նայելով՝ ոչ միայն սմբերկացի-
ները միշտ յայտնող կը հանդիսանան
այլ իրենց յայտնութիւնները շատ ալ
աժան ձևով կը բերեն, և երբեմն մէկի
դէմ տաք և երբեմն հարեւարապա-
տիկ կորուստ պատճառելով թշնամի-
ներուն, որովհետեւ սմբերկացիք, ալ
թող իրենց գործածած բազմազար-
ուածեան ու ահագին հրեաներն
թ'ոչ իրենց ունեցած առեւտ գէնքերն
և ազգամիթքները, ապստամբնե-
րուն վրայ կը յարձակին թէ ցամա-
քէն թէ ջուրէն, Տուրի փոքր մար-
տանները գետերէ ներս կանցնին և
թշնամիին կը սմբերկոյն մէկ կող-
մէն, մինչ միւս կողմէն բանակը իր
գործը կը կատարէ:

—Մարտիկան կառավարութիւ-
նը, կերէի թէ՛ Փիլիպեան ապստամ-
բները իր պատահազմիկ պիտի ճանչ-
նայ. նշաններ կան նաև թէ՛ Չին, կամ
Ճարոն և Գաղիայ ևս նոյն բանը
պիտի ընեն, քառանք գժուարու-
թիւններ պիտի ծագին վերջիններու
և Միացեալ Նահանգաց մէջ:

—Բուպայի մայրաքաղաքին մէջ
ձանր կուրներ պատահեալ են կարգ
մը զինեալ անդալներու և ոստի-
կանութեան միջև. երկու կողմէն ալ
վիրաւորեալներ ու մեռեալներ կան:

—Բուպայի ապստամբական բա-
նակին ներկայացուցիչներու ժողովը
քուէից մեծամասնութեամբ դատա-
պարտեց ընդհանուր հրամանատարը
գորավար Կոմէզ, և զայն իւր հրա-
մանատարութեան պաշտօնէն հրա-
ժարեցեալ հռչակեց, իր ոչ հայրե-
նասէր և իր գործը Միացեալ Նա-
հանգաց կառավարութեան: Միացե-
ալ Նահանգաց կառավարութիւնը
պահանջեց որ Բուպայի բանակը ցը-
րուի և ամեն մարդ իր տունը եր-
թայ: Բուպայի բանակին ներկայա-
ցուցիչներն ալ Մ. Նահանգներէն քա-
նի մը միլիոն տուրք պահանջեց, որ-
մէ իւրաքանչիւր զինուորի մասնա-
ւոր գումար մը տրուի, որը իր
տունը դառնալու ատեն ապրուստի
միջոց մը ունենայ: Երկար բանակ-
ցութենէ ետք՝ Մ. Նահանգաց կա-
ռավարութիւնը երեք միլիոն տուրք
տալ խոստացաւ և բանակին ընդհա-
նուր հրամանատար գորավար Կոմէզ
համաձայնեցաւ գումարի այդ քանու-
կին, և զբանակ ալ ճամբայ հանու-
ցաւ դէպի Բուպա՛ն քաղաքի զին-
ուորներուն վճարուելու համար:

Բուպայի բանակին ներկայացու-
ցիչներու ընդհանուր ժողովը շատ
քիչ գտաւ յիշեալ գումարը, և ա-
տար վրայ էր որ բարիացան գորավար
Կոմէզին ու զայն իր ոչ հայրենա-
սէր պաշտօնանկ ըրին: Կերէի թէ
վերջինեալ կուրի պատճառը այս
վերջին խնդիրն է:

—Ռուսիայ Չինաստանին կոնակ
կենալ կը խոստանայ իտալական զը-

բուսուրի պահանջին դէմ կենալու
համար, և ի փոխարէն ինք նոր տե-
ղէր կը գրաւէ Չինաստանէն: Ի՛նչ
կատակերգութիւն: «Ինձի տուր՝ որ
ուրիշը առնելն արգելեմ...» ահա՛
այսպէս է ոչ միայն Ռուսիայ՝ այլ
մասամբ ամբողջ Եւրոպական պետու-
թիւններու վարմունքը Չինաստանի
հետ, և որ սակայն ամենքն ալ կ'առ-
նեն ու կ'առնեն: Չինաստան և Թիւր-
քիայ անտառի տանձի ծառ եղեր են,
հասնողը կը քարտէ, երբեմն իրա-
ւու նետած քարերը կը քարտեն,
սակայն տանձերն են որ ծառէն վար
կը թափին միշտ:

—Իր, տէն գաղթող մահմետա-
կանները Չինաստանի մէջ անթիւ և
խեղճ մնալով՝ յարձակի են Թիւրք
ու Յայն խանութներու վրայ, գար-
կեր, վիրաւորք, սպաններ և կո-
ղտպար են: Ի՛նչպէս կ'երբ է որ այս
անգամ Հայերը զերծ մնացեր են այս
բարարտաներուն վայրագութիւննե-
րէն, և մահմետականները իրենց կը-
րօնակիցներուն վրայ կ'սկսին գոր-
ծաբեւել մ'ն: Ինչ որ սովորաբար դա-
րեք է ի վեր հայերուն վրայ կատա-
րեր են:

—Սեպտեմբերի 15-ին կարծիք
է թէ՛ այս Գալանի Մակեդոնի մէջ
որ և է շարժում չ'պիտի պատահի:

—Սեպտեմբերի 15-ին Լոնտոնի օթիսի-
քը՛ն են կարծիք հեռագրի մը կըսէ թէ՛
անուշայն նաւային պաշտօնեայնիցը
Անգլիայ նաւային զօրութեան ահա-
գին յաւելումն լուրն առնելով՝ զը-
լուխին կորսնցուցեր են, և կ'ըսեն
թէ՛ ալ ևս նաւալ նաւային ոյժ ունե-
ցող պետութիւնները պարագ սոնը
ճիշ պիտի գործեն իրենց կողմէ ըլ-
լալիք յաւելումներով Անգլիայ հետ
մրցել. ընդհակառակն՝ իրենց այդ
ընթացքով Անգլիայ չ'գնահանքի տե-
ղի պիտի ասն, որը այնքան մեծ նա-
ւային ոյժ մը ստեղծէ՝ որ կարող ըլ-
լայ Պալմիրէն մինչև վստիօրը պա-
շարել պատերազմական նաւերով.
ուստի գործը անուշի կապելու հա-
մար՝ միւս պետութիւնները դադ-
րելու են պատերազմական նոր նաւեր
չ'ինել տալէ: Ս. Փեթրպուրիի նա-
ւային պաշտօնեաներն ալ նոյն լուրը
լսելով՝ անակնկալէ մը զարնուածի
պէս նոյն խորհուրդը կ'արտայայտեն:

ՏԵՂԱՓՈՒՆՈՒԹԻՒՆ
ՏԻՐԻՍԻ Տպարանը փոխադրուեցաւ:
—Նամակ կամ ծրար զրկել հե-
տեւեալ հասցէին:
Q. B. CHUTJIAN
301 E. 34th St. N. Y. City

ԱՉՔԱՅԻՆ
ԷՆՔ ՉՈՂ. Պրոտուէյի և 27րդ փողոցի
անկիւնը, Նիւ Եորք:
Յառաջիկայ կիրակի երեկոյ ժա-
մը ճիշդ 8ին Ազատ Լուսարանի մէջ
պիտի խօսի ՏԵԹ. Գորբի էլեան. նիւ-
թըն է «Սեռական Բնագղը»: Երգե-
ցիկ խումբ մը ազգային երգեր պի-
տի երգէ: Մուտքը 2րի է:

ՈՒԷՍԹ ՀՈՊՈՒՐԸՆԻ ՀԱՆԴԵՍԸ

Անցեալ Շարաթ գլուխը Ուէսթ
Հոպքընի մէջ զանազան ներկայա-
ցուցիչ արուեստան ինպատակ անը-
կոցին: Իերակատարներն առ հաստ-
ակ բաւական յաջող կատարեցին ի-
րենց բաժինները: Սմենէն նշանակե-
լի թերութիւնն որ սահասարակ ա-
մենուն վրայ կը տեսնուէր՝ գէմքեր-
նուն վրայի մշտական ու ձախող ժը-
պիտներն էին, որք նոյն իսկ սղարու
և լալու տաններն ալ կը տեսնուէին՝
կարծես հանդիտականներուն ըսելու
համար թէ՛ «Մի՛ հաւատաք, խաղ է
այս»:

Մասնաւոր գնահատանքի արժա-
նի են նոր այդ Համարը և Սաշիկ
աղան. վերջինիս արտայայտութիւն-
ները շատ բնական էին: «Մետաքսի
գործաւորներ» ուն ներկայացուցը՝
Տիգրանակերտի բարբառով պատրաս-
տուած՝ շատ բնական էր: Կարապետ
Պէրպէրեանը ճշմարիտ դերասանի մը
ընդունակութիւնները ցուցուց: Այն
պատարութիւնն առ թէ՛ նա բնա-
կան դերասան մի է:

«Ազգիս Բարեկարգներ» դերին
մէջ՝ Խաչը մի քանի անգամ շարժա-
զանցութիւններէ՝ բաներն աղէկ ան-
ցան: Տնօրէնին իր դերն իրականաց-
նելու լըջութիւնը գովելի էր:
Հասոյթը 60 տարի շափ եղած է:

ԸՄԲՇԱՄԱՐՏ

Ուէսթ Հոպքընի «Փրէնչ Կաղի-
նօն» մէջ անցեալ կիրակի երեկոյ ըմբ-
շամարանցան Սեղաի Գուրուսման
Սարրերդցի (150 փառանա) և Ճան Գո-
գորս՝ Իտալացի (175 փառանա): Վեր-
ջինս բուական անուանի ըմբշա է,
իսկ Հայը երէք՝ ոյժ ունի միայն:
Իտալացին առաջին փորձին ատեն ու-
շաժափ կը ըլլայ, և երկրորդ փորձին
փառաւորապէս կը պտուկի կոնակին
վրայ: Ըստ օրինի՝ պէտք էր որ երեք
փորձ կատարէին, սակայն իտալացին
բարբառով կը հրաժարի անգամ մ'ալ
հայուն ձեռքը իյնալէ, ու հրապա-
րակ շի գար:

Տեղայն հայերը ուրախ են:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍՐԻՆԳ
ԿԱՍ ԱՉՔԱՅԻՆ ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ
(Գրականի Համար)
Նիւ Եորք, 1899
Հասար Ա.

Կը պարունակէ 250 երեսներ և 15
գեղեցիկ պատկերներ: Տպուած է
խիստ ընտիր թղթի վրայ և փառա-
ւոր կերպիւ կազմուած:
Գիներն են.

Թղթակազմ (առանց պատկ.) 50 Ալէնթ
Լաթակազմ — — 75 »
Կաշեկազմ — — 1.00 Տօլար

Մեծ քանակութեամբ գնողներու
համար մասնաւոր գեղջ կայ:

Գրեւ, դրամ կամ ծրար զըր-
կել առ՝

H. Eguinian,
145 East 23d St, New York City.



ՇԱՐԱԲԱՐՈՒԹՅԱՆ ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ
ԿՐ ՀՐԱՏԱՐԱՐԿՈՒԹՅԱՆ ԾԱՐԱԹՕՐՆԵՐ,
ՏԻԳՐԻՍ ՀՐԱՏԱՐԱՐԿՅԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԱՆԷ՛:

Գ. Պ. ՉԻՐՃԵԱՆ - - - - - Խմբագիր
ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՄԻՍՏԵԱՆ ԸՆԿՆՆԵՐՈՒՄ ՈՒ՝ - - - - - ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
ԲԱՆՍԱՍՏԻ ԶԱՄԱՐ ԶԱՄԱՐ
ՏԻ. ԱՅ. Տարեկան 10 ֆրանք
Տարեկան 1 50
Վեցամսեայ 75 Բաժանորդագրին ԿԱՆՈՒՄ
Եռամսեայ 40 Գճարելի է միշտ:

Ծրար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝
To the DICKINS PUBLISHING CO., 301 East 34th St., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐՔ, ՇԱՐԱԲ, ՄԱՐՏ 25, 1899.

ԿԱՉՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

«Մարդը ընկերական է» ըստած է: Անհատ մը ի մանկութենէ դուրս հանէ ընկերութենէն, դի՛ր անասոր մը, այրի մը, կամ եթէ կուզեն՝ սասանձին պալատի մը մէջ միայնակ, և կը մայրենանայ, կ'անանանայ: Ամեն անձ ունի մասնաւոր թերութիւններ և անկարողութիւններ, անձնաբերութեամբ զով գալովն է սր միմեանց լրացուցիչը, դաստիարակը և նեցուկը կը լինան:

Կազմակերպութիւնը կը կարգէ ընտանիքէն և կերթայ ընկերութեան, ցեղին, ազգին: Հայերուս համար միշտ ըստած է թէ կազմակերպութեան անընդունակ ենք: Արդ՝ համառօտ կերպով նկատուանք մեր յիշեալ անընդունակութեան սահմանը եւ պատճառը:

Մեր կազմակերպութեան ընդունակութիւնը ընտանեկան շրջանակի մէջ հիմնաւէ է, կատարեալ է, անզուգական է: 25, 50, 70, մինչև 100 հոգի մէկ յարկի տակ կ'ապրին Հայաստան, և կ'ապրին փառաբանելի խողաղութիւնով: սիրով, համբաշխութեամբ և համակերպութեամբ: Այս ընտանեկան կազմակերպութեանց մէջ շատ դիտելի բան է որ միշտ տանը ծերը, երէցը չէ սր կ'իշխէ, այլ երբեմն գաւազը՝ մինչդեռ հայրը կ'ապրի, և եղբայրներուն կրօնքը և ճշտութիւնը մեծ քննադատութեամբ մէջ՝ որ երկը կը զարթոցէ անգամ սպասուորութիւն կընէ կրթութեան եղբորը առջև, և ընտանեաց բոլոր անդամները հաճոյքով մը կը հնազանդին իրենց տանը կրօնքը մեծաւորին ամեն հրամաններուն: Երէցին իշխելու աւանդական գրութեանը այս գարտուղութիւնը՝ անգի կուեննայ հարկին պահանջովը: Երբ ընտանեկան պատիւը, շահերն և ապահովութիւնը կը պահանջեն որ անոր իշխանը լինայ՝ իրենց մէջէն ամենէն կարող, ամենէն ճարտիկ, ամենէն կտրուկ և ամենէն վարպետ անհատը: Ընտանիքի բոլոր մեծ ու պղծարկ անդամները՝ որուն վրայ որ գտնեն այս առաւելութիւնները, կը գնահատեն և զայն՝ եթէ նոյնիսկ կրտսերը եղած ըլլայ՝ տանը մեծաւոր կը կարգեն ու կը հպատակին անոր: Այս իրականութիւնը կը հաստատէ թէ Հայերս արժանիք գնահատելու և կարողին առջև թանաքահարու, անոր հրամաններուն համակերպելու և հպատակելու արամազրութենէն խալած զուրկ չենք: այլ ընդհակառակը նախանձ, մեծամտութիւն ու ետադրութիւն անգի կուտան մեր խոնարհ և անձնուէր համակերպութեանը՝ կը շահին գիտակցութիւնը կուեննանք: Ընկէ է շահն է այն կեդրոնաձիգ ուժը, որուն բոլորտիքը կը համախմբուին, կը խտանան ու կը կազմակերպուին ամեն կարգի անհատները:

Մեր՝ ցեղային ու ազգային կազմակերպութեան մէջ նպատաւոր ու աննպատա յատկութիւններու և արամազրութիւններու մասին յարգութեամբ պիտի խօսինք: այժմ երկու խօսք ըսենք ընկերական միութեան վրայով՝ ու վերջացունենք:

Մենք Հայերս ընկերութիւններ կազմելու է՛ն անընդունակ ժողովուրդն ենք: Երբ «Եփրատ»ի մէջ կարգացի Ուսման կազմուած «Հայոց Խնայողական Միութիւն» կոչուած ընկերութեան վրայով, այդ «Հայոց» բառը՝ տխուր նախադասութեամբ մը ինծի ըսել տուաւ: «Չ'յարդիր»: Եւ այսօր Ուսման մեր թղթակիցը ահա կը գուժէ անոր ջընջումը, յառաջ եկած հայկական սովորական պատճառներով: «Ես. իմ բարեկամս. իմ կողմնակիցս» - «Հաւր ինծի, պատիւը ինծի...» - «Ես, ես. ինծի, ինծի...»:

Բանաւոր չէ պահանջել որ ընկերութիւնները կազմուին ուրիշ շահուն, ուրիշին պատիւին համար անընդունակ կազմուելիք միութեան մէջ ամեն անդամակցող, բնականօրէն մտածելու է ամենէն առաջ իր շահը, իր պատիւը: սակայն ինքիւրը այդ շահին՝ այդ պատիւին ո՛ր եւ ի՛նչ բանի մէջ կենալը տեսնելու մէջ կը կայանայ: Որով-

հետ մեր երկրի մէջ դարերէ ի վեր ընկերական միութիւններու պայմանները զոյուժիւն չեն ունեցեր, այդ պատճառաւ ալ պատեհութիւն չէ եղեր որ անհատը իր շահը իր պատիւը տեսնէ միութեան ընդհանուր շահին և ընդհանուր յարգութեան մէջ: Հետեւաբար այդ կարգի ամեն ձեռնարկ ապարդիւն կը վերջանայ՝ «Ո՛չ ինծի ո՛չ քեզի»ով:

Եթէ Ուսման «Հայոց Խնայողական Միութիւն» ին մէջ անհատները բաւական իմաստուն և հեռատես ըլլալով՝ նախանձարկիւր ըլլալին ընկերութեան հաստատութեանը, շահուն և յարգութեանը: փոխանակ «Ես, եւ, իմ» ի անմշտութեամբ՝ չէնքի կազմութիւնները քաշքշելու և քանդելու՝ այսօր ամեն ոք պատիւ ունէր ընկերութեան հաստատութեան և յարգութեանը մէջ, և ամեն անհատ շահ կուեննար ընկերութեան յառաջ բերելիք շահերէն:

Սակայն այս ապարդիւն փորձերը առանց օգտակարութեան չեն անցնիր: կը սորվինք, կը դատարարուինք, կը իրատեսինք: կարծեմանք, փորձառութեան լոյսը կը վառի մեր անխորհուրդ ընդհարումներէն և շփոթումներէն՝ ու կը տեսնենք որ մը: Պիտի գայ ժամանակ որ ինչպէս Հայաստանի մէջ ընտանեկան շահին շուրջը ընտանիքներ կը բարտարին և կապրին սիրալիկ համակերպութիւնով ու համբաշխութեամբ, անանկ ալ որ մը Հայերս ընդունակ պիտի ըլլանք միանալ ընկերական շահուն շուրջը և պիտի գործենք ու գործակցինք իմաստութիւնով, խոհմտութիւնով, հեռատեսութեամբ, միութեամբ ու ներդաշնակութեամբ: որ տեսն անհատական յարգութիւններէն վեր՝ ընկերութեան հաւաքական ուժերուն մեծ արդիւնքներուն պիտի տիրանանք, մեծ յարգութիւններու և մեծ պատիւներու պիտի հասնինք: Չ'յուսահատինք, կրկին ու կրկին փորձենք, սակայն միշտ օգտուելով փորձառութեան տուած դասերէն՝ առաջնորդուինք փորձառութեան ճառագայթով լուսով:

ԹԱՏՐՈՆ, ԹԱՆԳԱՐԱՆ, ԼՍԱՐԱՆ

Պօսքն էր որ անընդամաք բացաւ կենդանական թագաւորութեան մէջ և ծնունդ տուաւ մարդուն, որուն ճակատին վրայ «Բանական» անունը գրուեցաւ լուսնային տառերով և որ փառաւոր հրաժեշտը տուաւ անասութեան և սկսեց թեւակոխել զարգացման, ինքի, խորհուրդի, մտքի, ստեղծողի, համարի, լուսաւորութեան, յառաջիմութեան եւ քաղաքակրթութեան սահմանները: Պօսքը կենդանական աշխարհի նոր արարիչը հանդիսացաւ: Պօսքը ստեղծեց մարդը՝ և մարդը ստեղծեց մտքին հրաշալի արտադրութիւնները: Այս նոր արարչագործութեան արտադրութիւններն այնքան երան՝ որքան այժմ ու ճոխութիւն ստացաւ խօսքը: Տե՛ս մարդն և իր արտադրութիւնները Ափրիկէի խորները, տես Չինաստանի ու Տաճիկաստանի՝ ու տես Ռուսիոյ, Գաղիոյ, Անգլիոյ և Ամերիկայի մէջ: Տես մարդը և իր վիճակը միապետութեան և բռնութեան՝ և տես սահմանադրական ու հասարակապետական գարեբու ժամանակ: Թող խաւար գարեբն իրենց ստախճանական սյրակերպութիւններով անցնին քու աչքիդ առեւէն: Թող նախապաշարութեանը և մարդիկներու շարիքները, հաստատունական խորհուրդները, բանաստեղծական բանասերու, շղթաներու և կառաւարաններու բոլոր ստուգումները և միութիւնները սակաւ առ սակաւ փարատին աչքիդ առեւէն: Թող ամայի անտառներու և ապալանեալ ճահիճներու մէջէն վեր բարձրանան փարիզի, Լոնտոնի և Նիւ Եորքի պալատները, գեղարուեստարանները և գեղարուեստները, փողոցները և սուենին իրենց բոլոր պարունակած պերճութիւններով, Էլեքտրական կառքերն ու լոյսերը, հեռագիրը, հեռաձայնը, ձայնագիրը, տպարանը, լուսանկարը, բոլոր ռոգեշարժ մեքենաները և գրեւորները՝ այն ատեն պիտի տեսնես թէ խօսքը ստեղծած է այս ամենը: Պօսքը քարայրին բերանը, խօսքը խրճիթներու պատերուն տակ, խօսքը վառարանի մը քովերը, խօսքը գրքի և լրագրի մէջ, խօսքը բեմերէն, խօսքը թատերաբեմին վրայ...:

Խօսքը իւր արուեստակէն արշալոյս և արշալոյսէն կէս օր, խօսքը իւր ձմեռային անջօր ճառագայթներէն քարնանային կենսաւէտ եղանակը և ամառուան կենսալիք օրերը: Ահա՛ խօսքին կատարած ու կատարելիք համեմատական դերը մարդկութեան մէջ: Պօսքը սրբան հայածեալ, որքան կաշկանդեալ, որքան ազատ և որքան քիչ գնահատուած ըլլայ՝ այն համեմատութեամբ ալ՝ ստոր, ինքզ ու ողորմելի կը ըլլայ անոր ենթակալ գտնուող ժողովուրդին վիճակը:

Ժողովուրդի մը փրկութիւնը, անոր զարգացումը և յառաջիմութիւնը՝ անոր մէջ եղող խօսքին որակաւորութենէն, եղանակէն ու ստախճանաւորութեան կախումն ունի: Այն օրը որ ժողովուրդը կ'ըմբռնէ այս ճմարտութիւնը՝ այն օրը կ'սկսի անոր նոր բաղդի առաւօտը և նոր կեանքի գարունը: Ուստի ճանչնանք խօսքին ոյժն ու արժէքը, գնահատենք զայն և տեղի տանք անոր հրաշալի արտադրութիւններուն:

Ինչպէս արեւը, օդն ու ջուրը ձրի են բնութեան մէջ, անանկ ալ, փառք տանք որ խօսքը ձրի է Հայերուս մէջ: Մեր գրագէտները անօթի փորով կատարած են իրենց գրական երկերը և անօթի մեռած, մեր ատենախօսները ձրի

կատենաբանեն յարաններու բեմէն, և մեր երիտասարդները ձրի գերասանական փորձեր կը կատարեն թատերաբեմերու վրայ:

Ամեն կիրակի առաւօտ և իրիկուն ձրի լսարան կայ էլքս՝ Հօլին մէջ 27րդ փողոցի և Պրատուէլի անկիւնը: Ձրի թանգարան կայ 145 Իսթ 23րդ փողոց: Սկսուած են թատերգական ներկայացումներ արուիլ բաւական յաջող կերպով: Պէտք է ազգի մը եւ ժողովուրդի մը լուսաւորութեան, զարգացման և յառաջիմութեան այս վառարանները գնահատել ու քաջալերել՝ իրենց բոլոր նախնական թերութիւններով մէկտեղ: Թող խօսքը Հայերուս մէջ ալ սկսի իր արարչագործութիւնները կատարել: Վարձքը ձրի է: Ըրի երթալ կարողալ կամ ունկընդիւր ըլլալ:

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

98 Յուն. 1ին Ուսման մէջ հաստատուեցաւ «Հայոց Խնայողական Միութիւն»-ը ու նոյն ամսուոյ հետ ալ վերջացաւ: Միութեան նպատակն էր իւր անդամաց փոքր խնայողութիւններով (մուտքի և շարժումներու ձեւին տակ) կազմել զբաժանարար մը և շահագործել զայն առաւելու միջոցով: Բաժնեգրին 5 տոլար և շարժումներ 25 ունիթ: Բաժնէկարաց թիւը 36ի հասած էր ու կ'աւելնար: Միութեան կազմակերպութիւնէն 7 ամիս ետքը ընդհանուր ժողով կը գումարուի եւ նորագործարար մարմին մը կ'ընտրուի, որոյ պաշտօն կը ազդուի որ գործի մը ձեւաւրի: Գործադիր ժողովն իր ընտրութեանէն 2 ամիս ետք՝ կ'որոշէ նպարտաւճարութեան մը արտադրութիւնը կը յանձնէ լիազօր մասնախումբի մը: մասնախումբն այժմ յարգ ժողովին իր բերանացի անդակութիւնը կուտայ: խանութիւն գնած են. գործադիր ժողովը կը մնայ միութեան անդամներէն խանութիւն մը և գործառնաւոր մը ընտրել: Ահա «Ես»-ի ու «բարեկամ»-ի խնդիրը կսկսի: մնացած դուք հետեցուցէք: Հինգ յարգարական ժողովներու արդիւնքն այն կը ըլլայ որ ժողովականները երկուքի կը բաժնուին: Մէկը իր բարեկամը, իր կողմնակիցը կառավարի, միւսը կը հակառակի, համաձայնութիւն մը անկարելի կը ըլլայ, և միութիւնը կը քայքայուի:

Հաւ կանոնադրի Երդ յօդուածի անդամներն իրենց վճարած դրամները վերստանալու իրաւունք ունին. ուստի կը պահանջեն:

Փետր. 28ին անդամական ժողով մի ևս կը գումարուի, ուր ըստ 35րդ յօդուածի՝ միութիւնը լուծեալ կը հռչակուի:

ԲԱՆՄՈՒՐ

Տէ՛ր
Կուգամ ցաւօք որտի ծանուցանել ՏԻԳՐԻՍԻ ընթերցողաց թէ՛ իմ ամուսինս Սողոմոն Ուզունեան (Պարբերեցի) 13 սարիէ ի վեր Ամերիկայ կը գտնուէր, որը ինքզինքը անտալութեան տարով՝ ո՛ր եւ է օգնութիւն չէր զրկեր ինծի և իր սակիւն, մինչեւ օր մը ինձ արձակման գիր մը զրկեց՝ արտօնելով վիս որ ամուսնանամ: Ես ուղեցի անձամբ Ամերիկայ զալ եւ այս խնդիրը օրէնքի միջոցով կարգադրել: Չաւակիս հետ հետեւ կայ, սակայն անգուժ մարդը չկրցայ տեսնել: Վերջապէս գատարան դիմեցի և վկայներով հաստատեցի իմ էրկանս զէմ ունեցած գտնաւորներս, եւ 99 Մարտ 10ին ստացայ արձակման վաւերագիրս: կը մաղթեմ որ բոլոր ինձ պէս դժբաղդ Հայ տիկիւններ ազատուին այսպիսի անտալ ամուսնաներու երկաթեայ շղթաներէն: Փրօլիտէնս ԱՆՆԱ Ե՛ ՊՅԱՆՆԱ

ՏԵՐ ԽԱՉԱՍՏՈՒՐԸ

Մեծ ու բարերար Հայ մարդ մը մեծաւ շարժանքներ առաջ, որուն մա- ճը շարժանագրեցինք զէթ երկուող մահազոյժ մը՝ արտասահմանի ա- զգաս Հայ մամուլին մէջ։

Կ. Պօլսոյ ներքին Գարուի աղքատ ու աղքատի Հայ ... Տէրտէրն էր այն. աղքատ եւ քահանայ և բարե- րար, էջ շատ զարմանալի ու սա- րօրինակ է, բայց ճիշդ ստոր համար է որ աղքատ Տէր Պապան մեծ է։

Կ. Պօլսոյ «Բիւզանդիոն»ը էջեր նուիրած է այս աղքատ ու աղքատ բարերար քահանայի մահուան առ- թիւ։ Օրմանեան Պարթիաքը և շատ մը բարձրաստիճան եկեղեցականներ ներկայ գտնուած են Տէր Խաչաստ- րի օծումին ու թաղումին։ Եպիսկո- պոսներու խումբը, որ քանի մը օր առաջ Նուպարի հագեհանգետի պաշ- տօնը շնորհ ու հանդիսաւոր ըրած էին Մայր եկեղեցիին մէջ, պարզ ու աննշան տէրարժ թաղումի արարու- ղութիւնն ալ արտակարգօրէն շքեղ ու հանդիսաւոր ըրին։

Ո՞վ էր այս խնդուկ Տէրտէրը, որուն դադարին առջև իւր դասու- կարգին սա մեծ պետերն անգամ կը խոնարհէին։

Մենք երբէք այնքան ազդու ու որոշ կերպով չը պիտի ճանչնայինք այս բարոյապէս վեհ մարդը, եթէ մեծ ու հոյակապ և նոյն ատեն բարի ու աղքատին բարեկամ գրա- դէտը շունենայինք Պօլսոյ, գրասէր Ատոմը, Եղիա, որ կարծես կարճ կա- պեց իր նուպարի մասին գրած մէկ երկու էջերը, էջեր գրեց Տէր Խա- չաստրի վրայ։

Կ. Պօլսոյ Հայ աղքատներու Հայ- րեն եղած է Տէր Խաչաստր ... քա- ռաստն տարիներէ իվեր։ Իւր եկե- ղեցական կենքին մէջ, ժամէն ու պատարագէն — ժողովուրդէն — ա- ռած գրամները ամբողջութեամբ գո- հած է միւս ժամին ու պատարագին — Հայ աղքատին ու զուգուածին. բայց ո՞չ միայն առածը տուած է աղքա- տին, այլ պահանջած, մտերացած, առած է շատ ունեցողէն ու տուած է ... երբէք չունեցողին։ Գրիստոսի քարոզումը միայն Հայ Տէրտէրը գոր- ծադրած է։

Ա. Եղիա կը գտասկարգէ Հայ աղ- քատներու բանակը, որ Տ. Խաչաստ- րէն բարերարուած են։

Իրենց յանցանքով աղքատ եղող- ները, ծոյլերը, արեցողները և այլն փրկած է Տէրտէրը՝ նախ օգնելով անոնց ու ապա իւր հայրական ու քրիստոնէական կարող, գիւթիչ ու աղբու խրատներով կանգնեցուցած է զանոնք։

Բ. Անոնք որոնք ուրիշներուն յանցանքով իրենք կարօտ եղած են ու կը տանջուին-

Ահա՛ Տէմիթիպաշեանի գրած կենսագրութիւնը այս անձնօթ քա- հանային, որ գատկներու ու ծնունդ- ներուն՝ իւր բազմաթիւ հարուստ ծխերու տները կը լեցնէր իւր քսակը ու յետոյ փոխանակ նշխարքի տոպ- րակը պարպելով իւր շքանոր ծուխ- րու տները, իւր գրամի տոպրակը լեց- նելու, դրամի տոպրակը կը պարպէր անոնց գրպանին մէջ։

Այս մեծ քահանան Հայրիկին կը մօտենայ Տէրտէր Հայրիկին է, թեպէ տե անոր աստիճանն ու գիրքն, ժո- ղովորականութիւնն ու հիմունքիւնը չունի, բայց անոր գործերը կ'ընէ. Գրիստոսի ըսածները այս մտքը կը գործադրէ։

Պէտք և կըսէն աւելի յայտնե- Նուպարին վրայ. պէտք եղածէն շատ քիչ չլացիք Տէր Խաչաստրին վրայ։

ՍՍՄՈՐ

ԳԻՏԵԼԻՔ

Մեր ընթերցողներէն անոնք՝ որ անգլիերէն չեն կարդար, կամ շատ քիչ տեղեկութիւն ունին, կամ եր- բէք չունին՝ դարուս ամենահարաշալի գիւտերէն մէկին վրայով, որը սո- վորաբար «էքս-բէյը» կամ «Բոթիկնի ճառագայթներ» կանուանեն։ Բոթ- կին է անունը այն աօքթօրին, որ այս գիւտը ըրած է։

Էքսբէյը երկտրական այնպիսի նուրբ ու զօրաւոր լոյս մի է որ կը թափանցէ հաստատուն նիւթերու, մինչև իսկ վեց մատնաչափ թանձ- րութիւն ունեցող պողպատին՝ ծակո- տիքներէն ու անոնց ետևը կեցող ա- ռարկաներու պատկերները կանդրա- դարձունէ և անտանելի կընէ։ Այս ճառագայթներուն միջոցաւ պողպատ- եայ սնտուկի մը մէջ պահուած իրե- րը, մարդուն հանդերձներէն և մարմինէն ներս ոսկորներուն ամբողջ կմտնքը, մարմինին մէջ գտնուած խոց մը, երկաթի կտոր մը, և այլն յայտ հանդիման և շատ պարզ ու որոշ կերպով կը տեսնուին։ Բժիշկ- ները ու վիրաբոյժները որ երբեմն մարդուն մարմինին մէջ հիւանդու- թեան ու ախտի պատճառ եղող օտար նիւթի մը, խոցի մը կամ որ և է վիճակի մը գոյութիւնը չէին կրնար տեսնել, հիմա այս ճառա- գայթներուն օգնութեամբ կը տեսնեն և ըստ այնմ ամենայն վստահութեամբ ու ապահովապէս իրենց գործողու- թիւնները կը կատարեն։ Վերջերս Բոթիկնի ճառագայթներով գործի մը շինուած է, որ ունի հոյելի մը ու լսելիքներ։ Մէկը որ կուզէ իր մար- մինին ներսերը տեսնել, այս գոր- ծիքը իր առջև կը դնէ և լսելիքնե- րը ակտիվներուն կանցունէ, յայնժամ նոյնիսկ իր սիրտը կ'անդրադառնայ այդ հայելիին վրայ, կը տեսնէ անոր բացուելն ու խփուելը, և կը լսէ ա- նոր բարբախումին ձայնը։

Այս հրաշալիքը դեռ իր մանկա- կան վիճակին մէջ է. ինչպէս որ հե- ռաձայն գործիքով մէկին ձայնը և խօսքերը կարձանագրուին շատ հե- ռունները ուրիշ ու լսելիքին, անտանել արժ մ'կը ջանան ու կարգ մը բա- լական յաջող փորձեր կատարած ալ են, որ էքս-բէյը միջոցաւ մարդոց խորհուրդները կարդացուին։ Այդ գործիքը երբ կատարելագործուի, մեծ ծառայութիւն պիտի մատուցա- նէ դատարաններու մէջ ամբաստան- ակալը հարցաքննելու ատեն, որով ամ- բաստանեալը ինչ որ չուզեր խոստո- վանիլ և կամ իր անպարտութեան մասին ինչ խորհուրդներ որ իր մըտ- քէն կանցնին անոնք ամենը պիտի կարդացուին։ Ասոր վրայ էր որ Նիւ Եորք «Սընը» կը բացագանչէր. «Այս ի՞նչ օրերու հասանք. մարդը մէկ բան մը ունէր անտանելի և գաղտ- նի — իր ներքին մտածութիւնը, իր խորհուրդը — հիմա այն ալ ծածուկ չպիտի պահուի։»

ԳՆԱ ՄԸ

— Իմ հայրս քեզ լաւ կը ճանչնայ։
— Տարակոյս չունիմ, որովհետեւ անոր աչքը բաց թողուցեր եմ։
— Ինչպէս ...
— Հայրդ վստահութեան կուրու- թիւնը ունէր, ես ալ իրեն հաւա- տացուցի որ իր բարեկամն էի։
— Ուրեմն քեզ իբրև բարեկամ չէ՞ որ կը ճանչնայ։
— Ընդհ չստ է որ «աչքը բաց թողուցի» կըսեմ, որովհետեւ անոս

թէ՛ ամեն բարեկամը եմ ըսողը բա- րեկամ չէ։

— Ուրեմն հայրս կոյր էր և դու իրեն բարեկամը չէիր։

— Ընդհ չստ է խնդիրը. հայրդ անանկ չարաչար խաբեցի, որ ան- գամ մ'ալ ամեն բարեկամ երեցո- ղին՝ «բարեկամս է» չ'ըսեր։

— Միթէ մարդուն աչքը բայ- ուելու համար՝ պէտք է որ անգամ մը խաբուի անշուշտ

— Մարդը՝ գիտէ. մարդ կայ որ ամեն օր ալ կը խաբուի և ամեն օր ալ կոյր է։

— Ուստի ըսել կուզես թէ՛ վըս- տահութիւնը կոյր է։

— Այն վստահութիւնը որ փոր- ձառութեան լոյսը չկրնար տեսնել՝ կոյր և շատ՝ ողորմելի կոյր է։

— Հապա ի՞նչ ընելու են այդ խղճալիները։

— Միշտ խղճալի մնալու են, մե- զի պէտքերուն հեծնելիք մարդ պէտք է, մենք ալ կը հեծնենք անոնց վրայ։

— Այս ի՞նչ բան է որ կը լսեմ. իմ ալ աչքս բայց ... Հիմա կը տեսնեմ որ ժողովուրդին մէկ մասը խաբող ու միւս մասը խաբուող, մէկ մասը հեծնող ու միւսը հեծ- նուող է եղեր։

— Վայ աշխարհին։ Այն որ ինք ուրիշը կը հեծնէ, մէկ ուրիշն ալ զինքը հեծեր է. այսպէս բոլոր մար- դիկ իրարու օմբիքն կ'առնեն և ի- րարու վրայ օմբիւրդում բռնուած տա- ժանելի և անտանելի լին մը գար- ձեր են, մինչդեռ եթէ ամեն անհաս- ուղղամտութիւնով իր անձնական մի- ջոցներովը ապրիլ ուզէ՛ր՝ ամենքն ալ ցնծութիւնով կը խոյանային եր- ջանկութեան լոյսին տակ։ Մանուակը վայ այս անիբաւ ու անմիտ բռնա- լորուճներուն ամենէն տակը ինկող մասին՝ որ հասարակ դասակարգ կոչ- ուած է։

— Հիմա կը յիշեմ նշանաւոր անձի մը այն խօսքը՝ թէ «ժողովուր- դին կոյր վստահութիւնն է որ կըս- տեղծէ բռնաւորները»։

ՏԵՂԱԿԱՆ

Նիւ Եորքի 28րդ փողոցին մէջ հրդեհ մը պատահեցաւ, ուր երեք Հայ ընտանեաց գոյքերը վառեցան։

Տեղացի տիպանտներուն հա- մար աւելի հետաքրքրական տեսա- րան մ'է եղեր այն՝ որ կրակէն բա- լական հեռու գտնուող տուններէ հա- յեր գոյքերին կոնակինն առած պո- ռալով ու ճշեղով կը փակչին՝ գա- նոնք ապահով տեղեր դնելու հա- մար. մինչդեռ հրդեհին կից տունե- րու տեղացի բնակիչները դուրսը պաշարիւնութեամբ մը կանգնած՝ ականատես կըլլան։

— Ուրբաթ կէս օրին քաղաքիս ամենաաւանակարգ պանդոկներէն Ուինզլըր կրակ առաւ և 15 րոպէի մէջ ամբողջ շէնքը բռնեցան, անանկ որ շատերը փակչելու ժամանակ չունե- ցան. ումանք ինքզինքնին պատու- հաններէն վար նետեցին ու մեռան. ուրիշներ ալ շէնքին հետ վառեցան։ Մինչև հիմա մեռած գտնուածնե- րուն թիւը 16 է, և 65 հոգի ալ կոր- սուած կան։

— Այս օրերս Նիւ Եորք նահանգի մէջ ամենայնուզեալ խնդիրը՝ մահա- պարտ տիկին Փլէյսի երկարական ա- թոռի վրայ սպաննուելու խնդիրն է։ Կառավարիչ Ռուզվելթին շատ մը զօրաւոր գիմուճներ եղան՝ որ- պէս զի այս մահուան պատիժը ցկեա- նը բանտարկութեան փոխէ՛ այն հի- ման վրայ թէ՛ տակաւին Նիւ Եորք նահանգին մէջ կին մը մահու պա- տիժ կրած չէ, և թէ քաղաքակրթ- թութեան հակառակ է կին մը մեռ- ցունելը։ Սակայն կառավարիչը բո- լորովին մերժեց այս խնդրոյն միջա- մըտեղը։

Ա. Զ. Դ

Լրագիրները սոսկալի գրքը ու- ռած են կառավարչին դէմ։ Նիւ Եորք ձըրնը կառավարիչը կ'ան- ուանէ «ունայնամիտ, վատ, հաստա- մորթ գաղան» և այլն։

Նիւ Եորք նահանգի Օրէնդրա- կան մարմինն մէջ խնդիր պիտի ը- նեն՝ որ մահուան պատիժը բոլորու- վին վերցուի։

Տիկին Փլէյս Երկուշարթի առա- լուս երկարական աթոռի վրայ սպան- նուեցաւ։ Այս կնոջ կատարած գա- զանային արարքը իրօք սոսկալի էր։ Կացինի հարուածով սպաննեց իր 19 տարեկան խորթ դուստրը և նոյն- պէս կացինի հարուածներով իր ա- մուսինը կիտամեռ վիճակի մէջ ձը- գեց։ Սակայն ընդհանուր կարծիքն այն է թէ՛ թէ և միջին դարու մէջ այսպիսի եղեռնագործ կին մը եռա- ցած ձէթի մէջ պիտի եփէին, իսկ ներկայ քաղաքակրթութեան ատեն՝ մարդկութիւնն այնքան աղուացած ու բարձրացած պէտք է ըլլայ որ վը- րէժինդրական օգնով չ'վարուի մա- հապարտներու հետ, այլ ներողամե- տութեան մեծ հոգիի մը օրինակը սա։

— Ամերիկեան բանակին տրուած պատրաստեալ միսին վրայով եղած զեղծումներու ամբաստանութիւննե- րը քննելու համար կարգուած երկ- րորդ ֆինիչ յանձնաժողովը կը շա- րունակէ իր գործը։ Կ'երևի թէ այս յանձնաժողովը կուզէ խնդրը գոց պահել ի նպատակ մի ընկերութեան ու կառավարական զեղծ պաշտօնեայ- ներու. սակայն օր ըստ օրէ անանկ զօրաւոր յայտնութիւններ երեւան կուգան, որ կերևի թէ արդէն եղած ամբաստանութիւնները պիտի հաս- տատուին, և այդ պարագային՝ եթէ կառավարութիւնը անաչառ վարուիլ ուզէ՛ հարկ պիտի ըլլայ կործ մը զինուորական բարձրաստիճան պաշ- տօնեաներ հրացանի բռնել և Արմըր ընկերութեան տէր և տնօրէնները կախապան հանել։

Ա. Զ. Դ

Վաղը «Անուակ»ի կիրակէ Լի- նելով՝ Ս. Ոսկերբան եկեղեցւոյ մէջ «Արեւազալ»ի արարողութիւնը պի- տի կատարուի և Արթ. Խաչ վար- դապետ պիտի քարոզէ՝ նիւթ ունե- նայով «Մուրեալ ոչնչովը»։

ԳՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՍ

ՀԱՅ ԵՐԻՏՍԱՍՏՈՒԳԱՆ ԹԱՆԳՍՐԱՆԻ Մ Ի Ո Ի Թ Ե Ա Ն

Ի նպատակ Թանգարանի Միութեան, 1898ին Հաստատած Ազատ Ընթեր- ցարանի Պահպանման

Ապրիլ 1, 1899, Ծարաթ Երեկոյ ժամը ճիշդ 8ին, Ի կրամբոյ Լայսիւմ շօլ, 117 Ուէսթ 23րդ Փողոց, 6րդ Ամբիւս մօտ, Նիւ Եորք։ Տոմարները կը ծախուին հետե- կալ տեղերը. Նիւ Եորք Թանգարանը Վէսթ Հոպոլըն S. Կ. Չանգալեան Փէթլըրըն S. Ե. Գալէճ. Փոյնթ S. Ե. Ազատեան

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Որովհետեւ S. Գ. Չիթճեան այս երեկոյ քաղաքէս բացակայ պիտի գտնուի քանի մ'աւուր համար. ուս- տի այս կիրակէ Ազատ քարոզի ժո- ղովն տեղի չի պիտի եւնենայ։

ՆՊԱՐԱՎԱՃԱՍԻ

231 Իսթ 28րդ փողոցի նպարա- վաճառի խանութի մէջ ի միջիւն- լոց՝ կը վաճառեմ պուրդուր փաթեւը 4 սէնթի, ծեծած՝ 5 սէնթի և գառան միս՝ 6 սէնթի փաթեւը։ ՄԵՍՐՈՊ ԳԱԶԱՆՃԵԱՆ (Բայուց

